Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

9018

891.99
Б-77

891.99
Ե-77
№ 108
1002
39440

# ԵՐԳ

Վասն պաշարման Կարսոյ բերդին և անմահանալի յաղթութեան
Ռուսաց 'ի վերայ լերին որ կոչի Աւլեայ անդ 'ի Շերամ Թեփէ Ճնէ

1877 ամի 'ի յ3-ն հոկ.—է 6-ն Նոյեմբերի,

Աշուղագրութեամբ հայկական տաղ քերթուած

Լորիս Մէլիքովի:

Յօրինեց Թ. Կ. Շ. . .

Կ: Գանձակ

**1878** *ամի* **Յուլիսի 15** *ին*

Տպագրվեց Փէդրոսի և Թառամեանի տպարանում:

Ե-7003

Дозволено Цензурою Тифлисъ 8 Марта 1878 г.

ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

35338.



...ь-адъютантъ М. Т. Лорисъ-Меликовъ, начальникъ кавказскаго корпу...
дѣйствующе[й] арміи.

3256

Дозволено Цензурою Тифлисъ 8 Марта 1878 г.

# ԵՐԳ

Երկինք ցնծան՝ արփին 'ի չո՛ւ նաւ 'ի նաւ.
Յօր քո տօնի. քաջ հայկազուն վեհ իշխան.
Դու աջ բազուկ կայսեր մեծին՝ ռուսաց
Կա՛ց դու յաւերժ արի հսկայ, վեհազանց.
Քաջահռչակ, քաջահամբաւ, քաջագով
Ով քաջ իշխան վեհդ Լորիս Մելքով:
Լուսարփենիք այսօր զինին 'ի գուպար.
Թռչին ծափեն, 'ի ծերս երկնից 'ի կամար,
Գարք հրեղենք կազմեն այս օր նոր ճամբար.
Գան 'ի վերուստ. զօրաց ռուսաց 'ի սատար.
Քաջահռչակ . . .
Գարք հրեղէնք այսօր վառին 'ի զէն սուր.
Շանթեն վերուստ, շանթ հրածին կայծակ հուր
Գան 'ի վրէժ, անարգանաց սուրբ Խաչին
Երկցեն տաճիկս զօրաց ռուսաց առաջին
Քաջա . . .
Ահեղաստատ պետ զուարթնոց Միքայէլ
Գայ 'ի սատար. իւր համանուն՝ ասպետին.
Որպէս եկն երբեմն Յեսո՛ւայ պաղեստին
Զօրավարին իսրայելեան բանակին
Քաջա . . .

Յաւուր տօնի՝ վերին զօրաց, զօ՛ւարթնոց.
Մեծ Միքայէլ սուր 'ի ձեռին 'ի հուր բոց
Վեհ Միքայէլ արքայազուն իշխանին
Յառաջնորդէր, 'ի մէջ Կարուց ամրոցին
Քաջա . . .

Պետ զուարթնոց, հրեղէն աննիւթ կառքերով
Հողաթեւեալ, 'ի թեւ թեթեւ իւր զօրքով,
Գայ զօրաւիգ, վեհիդ Լորիս Մէլիքով
Որպէս երբեմն եկն առ Յեսու յերիքով
Քաջա . . .

Դասքն սրբոց, մարտիրոսաց յաղթական՝
Որք 'ի յերկրէ վերաչուեալ գաղթական
Այսօր 'ի ծունկ մատչին առ Տէր Արարիչ
Խնկեն զխունկ զեղձս աղօթից մաղթական
Քաջա . . .

Լուսարփինեք գայցեն սատար 'ի վերուստ
Զեզ օգնութիւն հասցեն վերինք Աստուածուստ
Տէր պահեսցէ զաթոռ կայսեր ռուսաց
Մինչև վերջին ահեղասաստ իւր գալուստ
Քաջա . . .

Արեգն 'ի ձեմ յերկնից 'ի ծեր արդ ցնծայ
Ակնարկ ձգեալ 'ի քո հանդէս Շիրակայ
Ով հայկազուն քաջ իշխան գերագայ
Յաղթահասակ նման նախնոյն վեհ Հայկայ
Քաջա . . .

Լուսին, աստեղք, 'ի կամարին՝ յողիմպեան,
Հրճուին ցնծան, քո յայս կրկէս յաղթութեան
Ցնծան Շիրակ վեհ Արարատ Երևան.
Ցնծան Բասեն, Տայք, Արդանուշ, Արդահան.
Քաջա . . .

Լերինք հայոց, այսօր ցնծան բարձրաբերձ,
Կաթուղիկէք խաչ 'ի գլուխ ամբամերձ
Խնկեն յորէնն խունկս աղօթից զեղձ ուղերձ



Ընկցեն հազարս ընդ ոտիւք քո մերձ ընդ մերձ
Քաջա . . .

Ցնծան այսօր, բարձր Մասիս ամպամած.
Խայտան այսօր, լերինք բլուրք Արագած.
Զեր յաղթութիւնն կայսրն համայն ռուսաց.
Խայտայ խնդայ 'ի խինդ 'ի ցինծ մէջ փառաց.
Քաջա . . .

Խայտան լերինք Հայաստանի՝ վեհ Կովկաս.
Առ յաղթութիւն կարուց դաշտին, 'ի ներկայս.
Աստուած պահէ ձեզապիսքն, անպակաս.
Որք արշաւեն ճակատ մարտին միշտանկաս.
Քաջա . . .

Յանխօնի, լերան վերայ, 'ի ճամբար.
Արշաւեցիր, սուր 'ի ձեռին առնաբար.
Արկեր տապաստ հազարացիս սառնաբար.
Զէտ նապաստակ հալածեցեր զՄուխտար.
Քաջա . . .

Ով քաջ իշխան վեհդ Լորիս Մէլիքով.
Քո աջակից, քաջ հայկազն Լազարով.
Անպարտելին արի հսկայն Տէր Ղուկասով.
Մեծ կորովիք Շելկովնիկով, Ալխազով.
Քաջա . . .

Հաւատարիմք, կայսեր վեհին ռուսաց.
Հինգ հայկազունք, արի հսկայք գերագանց,
Ծնունդ սնունդ 'ի յարամեան յատամեան զիւցազանց.
Արդէն հայոց, դուք էք պարծանք պարծանաց.
Քաջա . . .

Մինչ կայր կովկաս, յոգիս բերան յապաստան.
Նոյն համակեալ մեր խղճալին Հայաստան.
Զեռս տաճկաց, եղեալ իսպառ փայատան.
Կայր և մնար զօրաց կայսեր զալտեան.
Քաջա . . .

Զօրքն կայսեր եկին հանդէպ և կացին.

Գրո՛հ տ՛ուին 'ի մէջ տաճկաց 'ի բոցին.
Զարթուանիշ գրօշակս պարզեցին.
Եւ կանգնեցին 'ի մէջ կարուց ամրոցին.
Քաջա . . .

Ընդ գերեցին, զօրս տաճկաց անհամար
Եւ խլեցին թնթանօթս, շատ պաշար.
Զվառօթից և փամբուշտից ողջ ամբար.
Զուր պատրաստեալ ունէր փաշայն հէք Մուխտար.
Քաջա . . .

Մուխտա՛ր փաշա ամօթէ քեզ ամօթ շատ
Դու էի՞ր փախար որպէս աղուէս շատ շատպ
Ընդ՞էր թողեր զքո բանակ մարդաշատ
Այ դու յիմա՛ր երկչոտ ճագար հէք կնատ
Քաջա . . .

Վրանն քո գլուխ սարին ցից մնաց
Զօրք և զէնքդ առ 'ի Տփխիս շուտ գնաց.
Դու թաշկինակ առ քո աչաց նստիր լաց.
Զքեզ ծանիր և զչափ քո աչքդ բա՛ց.
Քաջա . . .

'Ի զոհ մատնեալ՝ զօրք քո ձիոց սմբակաց.
Ոմանք գերի, 'ի հայրենեաց տարակաց.
Ոմանք 'ի սուր, թաւագոլոր գլխակած
Այլք վիրաւոր, անկեալ 'ի մէջ գլխակաց.
Քաջա . . .

Ցնծան այսօր Մուշեղ, Արամ և Գագիկ.
Արքայք կարուց 'ի յերդ գուսան կոլովէք.
Զի բեր արքայ այսօր զկնի 'ի յաչաց.
Հէք ափխազաց թագաւորն ազգուրաց.
Քաջա . . .

Այսօր ցնծայ, մարզպետունին քաջ Գէւորգ.
Ցնծայ Թաթուլ վանադեցին ձեռ 'ի գորդ.
Քաջարագուկ անկրկնելին 'ի հարուած
Սուր 'ի ձեռին ընդդէմ պարսից զինուորաց.
Քաջա . . .



Այսօր ցնծայ, կար նահապետ հայկազուն.
Իւր գաստակերտք կարին կարս ձեռնասուն.
Ազատեցան հագարացւոց 'ի ձեռաց.
Ձեռամբ քաջաց, վեհ հայկածին իշխանաց.
Քաջա . . .

Վերինք կարուց, դաշտ Շիրակայ բազմարդիւն.
Ուրախացան ընդ քո անզոյգ յաղթութիւն.
Աբբին զարիւն բիւզանդիոյ բնակչաց.
Արդ արբեցան արդ թմբեցան քաղցր 'ի քուն.
Քաջա . . .

Մեծ լեառն որ Ալաճայ, անո՛ւանի.
Որ կայ կանգուն հայաստանում մերձ յԱնի.
Ուրախացաւ քո յաղթութիւն զօվանի.
Քաջ հայկազուն արի իշխան գեղանի.
Քաջա . . .

Արեգակն յԱրագածէն, ծագեցաւ.
Աներախտ Անին արեամբ տաճկաց յագեցաւ.
Էառ զվրէժ իւրում Գագկայ արքայի.
Բիւզանդիոյ սննդոցն օմարի.
Քաջա . . .

Շերիմք քաջաց, Բագրատունի արքայից.
Այսօր ներկան արեամբ տաճկաց վերալից.
Սա է վրէժ, վրէժ վերին պատգամաց.
Կմախք կոչեն աճուանացեալ 'ի շիրմաց.
Քաջա . . .

Ախորեանի ալիք գնան, 'ի բոսոր.
Ուրախ ուրախ, սահին 'ի վայր անդորր.
Իւր թշնամեաց, ներկեալ արեամբ սեւաւոր.
Առեալ վրէժ առ 'ի տաճկաց դարաւոր.
Քաջա . . .

Սահի Երասխ, դարիւ դարիւ 'ի վճիտ.
Երասխաձոր 'ի դաւառին ակնակիտ.
Փրփուր հանէ, որպէս կայլակ մարգարիտ.

Առ գետն Կուր տանի գլուր ճշմարիտ.
Քաջա . . .
Կուր իմ եղբայր քեզ աւետիս մխիթար.
Իմ մօտ անկան զօրքն տաճկաց վատախտար.
Բազումք եղեն 'ի մէջ իմ գետատար.
Քանզի տեսին փախաւ իւրեանց պետ Մուխտար.
Քաջա . . .
Երև կարդայ Կովկաս զօրաց ռուսաց.
Երև կարդայ, Մասիս հայոց իշխանաց.
Երև կարդայ Անին տխուր տրտմազգած.
Երև կարդայ Արմենակայ Արագած.
Քաջա . . .
Երև կարդամք մեծի կայսեր մեծազօր.
Երև կարդամք վեհ ժառանգին մեծազօր.
Երև կարդամք զօրաց կայսեր հեծազօր.
Տէր պահեսցէ ամայրամն տէր հզօր.
Քաջա . . .
Երև մաղթէ Շիրակունին ձեռնամբարձ.
Երև մաղթէ, առ 'ի վերուստ 'ի բարձանց.
Երև մաղթէ կայսեր մեծին ռուսաց.
Երև մաղթէ Հայկազունի իշխանաց.
Քաջա . . .
Ձեռք իմ մատունք ահա աստէն առին կաս.
Զ'ունիմ մամուլ, չունեմ սատար մեկենաս.
Զ'ունիմ ոսկի չունիմ արծաթ յիմ քիսաս,
Այլ ունիմ սիրտ ազգիս ձոնիմ 'ի սպաս:

Երգ ՚ի յանցանելն ռուսաց կայսերական զօրաց ՚ի սահման [illegible] յանկոյս Ախուրեան գետոյ ՚ի 12 ապրիլ ամսոյ ներկայ 1877 ամի։

Երբ ողջունէր, Կայսեր Մեծի օգոստափառ, հրաման.
Երբ ծագեցաւ, արեգն ՚ի ծիր բարձր լերանց յարտեւան.
Արագածու, հովիտնէն երբ ծագեցաւ առաւօտ.
Ողջ Շիրակայ, բնակչացն, այսօր հնչեաց քաղցր օդ.
Երբ ծագեցաւ վարդամատն, բարձր լերանց յարտեւան.
Զօրքն ռուսաց, անցին փութով ՚ի գետն մեծ, Ախուրեան.
Երկոտասան, ապրիլ ամսոյս, յայսմ ամի ներկայիս.
Ուրախացան լերինք բարձունք, թէ Արագած թէ Մասիս.
՚Ի մի հազար, ութն հարուր եօթ՛նասուն եօթն ամաց
Զօրքն ռուսաց, մուտ ՚ի կրկէս, դէմ հագարոյ դէմ մարաց.
Քաջ երկգլխեան, արծուն յաղթող, եմուտ յԱնի հողաթեւ.
Ողջ Շիրակայ, լերինք բլուրք պար բոլորեն պարաթեւ.
Մանկունք հայոց, կարդան կեցէ, կեցէ կայսրն ռուսաց.
Կեցեն կեցեն, յաւերժ կեցեն զօրք զօրավարք ռուսաց.
Կեցէ յաւերժ յամայր ամս. Աղեքսանդր տէր ալք ս.
Այսօր ցնծան, բագրան անի երազգաւոր, արգենայ.
Երբ արշաւեաց զօրքն կայսեր յԵրազգաւոր, Գիւլավարք.
Ախուրեանի ալեք կարդան մեծի կայսեր երկայն կեանք.
Գիւլավանից, Շիրմաց, մաղթէ ձայն Բարսեղն առ Աստուած.
Զի լինեսցի, տէր զօրաւիգ համայն զօրաց ռուսաց.
Ցնծան այսօր, բագրատունեաց շիրիմք քաջաց դարաւոր.
Ընդ ողջունել արծուոյն մեծի դրօշակաւ փառաւոր.
Արագածու, ծայրէն յորժամ արեւն ՚ի լոյս, ծագեցաւ.
Կա[illegible]սերական զօրաց սուրն արեամբ մարաց յագեցաւ.
[illegible]ուետիս կարդամ այսօր բագրատունի ալքայից.
Ա[illegible]յցելու Շիրմաց ձերոց, ալքայն ռուսաց առաւհից.

«Նոր ծագեցաւ, ձեզ խնդա՛ Հայեր, նոր առաւօտ արշալոյս.
Ձեզ քաջ Հայեր, ձեզ արդ կարդամ ձեզ աւետիս, աչքալ։
Ահա այսօր, ազատեցաւ՝ անբախտ Անին 'ի ժանեաց.
Հագարացւոց պղնտ յանրոյն Հագարացոցն 'ի ձեռաց.
Ուստի Ռուս Հայ եղբայրներ, մաղթել կայսեր կեանք բարօր.
Վեհ ժառանգին մաղթել արև զօրաց կայսեր երկայն օր.
Երկայն արև, ծլին ծաղկին կայսերական գերդաստան.
Որում այսօր կայ Հայաստան ոգխս բերան յապաստան.
Կեցէ յաւերժ յամայրամն՝ Աղէքսանդր Արքայն քաջ.
Կեցեն նորին զօրք զօրաւարք կեցեն գնան ընդառաջ.
Կեցէ ժառանգ մեծի կայսեր, Աղէքսանդր համանուն.
Վեհ համաշիրտ, հօրն իւրոյ, և համախառն գերաբուն.
Կայսերուհին՝ կեցեն ուրախ, յաւերժ կենօք՝ բերկրաւէտ.
Օգոստափառ վեհ զաւակօք կեցէն մաղթեմք բազմավէտ.
Կեցէ հաստատ՝ գահ գայեսօն կայսերական մեծ պալատ.
Կացեն կայսեր բուրգ և ամրոց կայցեն ամուր ամրապատ.
Շիրակունի քո Հայրենեաց այսօր տօնէ աւետիս.
Աւետիս տո՞ւր Հայաստանին Թաչի հանգչի, 'ի Մասիս:

Թ. Վ. Շ.

17365

9018